ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/0853/05/18
Նախագահող դատավոր՝ Ա. Հարությունյան
Դատավորներ՝ Մ. Մելքումյան
Հ. Խաչատրյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/0853/05/18**
2026թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
զեկուցող Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ք. ՄԿՈՅԱՆ

2026 թվականի նոյեմբերի 11-ին

գրավոր ընթացակարգով քննելով Վիոլետա Խառատյանի իրավահաջորդ Սոնա Գևորգյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 06.06.2025 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Վիոլետա Խառատյանի իրավահաջորդ Սոնա Գևորգյանի ընդդեմ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր), երրորդ անձինք՝ Արայիկ Երեմյան և Գայանե Երեմյան՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 29.12.2017 թվականի կասեցումն անվավեր ճանաչելու և Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪[1] հասցեի վերաբերյալ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 19.01.2006 թվականի թիվ 2-327 վճռի հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումն ուժը կորցրած ճանաչելուն պատասխանողին պարտավորեցնելու պահանջի մասին,

[1] Հանդիսանում է անձնական տվյալ

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Վիոլետա Խառատյանի իրավահաջորդ Սոնա Գևորգյանը պահանջել է անվավեր ճանաչել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 29.12.2017 թվականի կասեցումը և պարտավորեցնել պատասխանողին ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪[2] հասցեի վերաբերյալ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 19.01.2006 թվականի թիվ 2-327 վճռի հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 17.06.2024 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.06.2025 թվականի որոշմամբ Վիոլետա Խառատյանի իրավահաջորդ Սոնա Գևորգյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.06.2024 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վիոլետա Խառատյանի իրավահաջորդ Սոնա Գևորգյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել երրորդ անձ Արայիկ Երեմյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 13-րդ և նույն կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ, 163-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ, 26-րդ, 27-րդ, 124-րդ հոդվածները, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Արայիկ և Գայանե Երեմյանների անուններով իրավունքների պետական գրանցումը (սեփականության վկայական թիվ ▪▪▪▪▪▪▪▪[3]) 03.04.2006 թվականին կատարվել է՝ հիմքում ունենալով միայն դատական ակտ, որը, սակայն, հետագայում բեկանվել է: Այսինքն՝ վերոնշյալ իրավունքների պետական գրանցումը հիմքից զրկվել է: Հետևաբար, սույն գործով ներկայացված հայցով հայցվոր կողմի պահանջն իրավաչափորեն ուղղվել է իրավունքների պետական գրանցումն ամբողջությամբ չեղարկելուն, և հայցը պետք է քննվեր ու վճիռը պետք է պատճառաբանվեր այս տեսանկյունից, որը չի արվել:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ մինչև 19.01.2006 թվականի թիվ 2-327 քաղաքացիական գործով կայացված վճիռը Գայանե և Արայիկ Երեմյաններն իրենց

[2] Հանդիսանում է անձնական տվյալ
[3] Հանդիսանում է անձնական տվյալ

անունով իրավունքի պետական գրանցում ստացած գույք չեն ունեցել, և միայն այդ վճռի հիման վրա է առաջին անգամ 03.04.2006 թվականին կատարվել նրանց անունով իրավունքի պետական գրանցումը: ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը սեփականության իրավունքի գրանցման համար հիմք հանդիսացած վճիռը բեկանել է, ապա որոշում է կայացվել վճռի կատարման շրջադարձի մասին: Հետևաբար, այս գործով սեփականության իրավունքից զրկելու ինստիտուտի մասին խոսք լինել չի կարող, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Տվյալ դեպքում առկա է Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪[4] հասցեի գույքի նկատմամբ Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը դադարեցնող դատական ակտ, քանի որ նրանք այդ իրավունքի պետական գրանցումն առաջին անգամ կատարել են հենց բեկանված վճռի (դատական ակտի) հիման վրա:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ դատական ակտով հաստատվել է, որ իրականում գոյություն ունեցող գույքը՝ հողը, սեփականության իրավունքով պատկանում է Վիոլետա Խառատյանին, և այն փաստացի հետ է վերադարձվել նրան, հետևաբար նա այդ գույքի նկատմամբ ունի իրավունքի պետական գրանցման «օրինական ակնկալիք»:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ բողոքաբերը հնարավորություն չի ունեցել մասնակցելու վերջին շուրջ չորս ամիսների ընթացքում տեղի ունեցած դատական նիստերին, քանի որ ծանր հիվանդության դեմ բուժման մեջ է գտնվել: Նիստերը հետաձգելու խնդրանքով վերջինս դիմել է Դատարան, սակայն դատական նիստերն անց են կացվել Սոնա Գևորգյանի և նրա ներկայացուցչի բացակայությամբ:

Այսինքն, բողոքաբերը զրկված է եղել որպես կողմ քննության ընթացքում հավասար իրավունքից՝ դիրքորոշում հայտնելու, փաստարկներ և հիմնավորումներ ներկայացնելու հնարավորությունից: Մինչդեռ, այդ ընթացքում պատասխանող կողմում ընդգրկված երրորդ անձինք՝ Արայիկ և Գայանե Երեմյանները, ներկայացրել են դիրքորոշում և միջնորդություն, որը ըստ էության ունեցել է ազդեցություն բողոքարկվող դատական ակտն իրենց օգտին կայացնելու համատեքստում:

Վիոլետա Խառատյանը, այժմ նրա իրավահաջորդ Սոնա Գևորգյանը տարիներ շարունակ զրկված են իրենց գույքի նկատմամբ սեփականության իրավունքի իրացման հնարավորությունից: Սեփականության իրավունքի բաղադրիչներից իրենց հայեցողությամբ իրացնելու համատեքստում միայն՝ օգտագործումն է հասանելի:

Վերաքննիչ դատարանը չի պատասխանել ամենակարևոր հարցին, այն է՝ առկա է դատական ակտ, համաձայն որի՝ Վիոլետա Խառատյանի իրավահաջորդ՝ Սոնա Գևորգյանը անպարտ է և ունի սեփականություն 66քմ հող, որը փաստացի օգտագործում է, սակայն այն շարունակում է պետականորեն գրանցված մնալ Արայիկ և Գայանե Երեմյանների անունով, ինչը խոչընդոտ է ստեղծել իր սեփականության իրավունքի պետական գրանցման համար:

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմամբ չի գնահատել ապացույցները և եկել է սխալ համոզման ու սխալ է պատճառաբանել նման համոզմունքի ձևավավորումը:

---

[4] Հանդիսանում է անձնական տվյալ

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.06.2025 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

2.2. Վճռաբեկ բողոքի վերաբերյալ երրորդ անձ Արայիկ Երեմյանի պատասխանի հիմնավորումները.

Տվյալ դեպքում առկա չէ Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪[5] հասցեի գույքի նկատմամբ Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը դադարեցնող դատական ակտ, այն է՝ վերոնշյալ գույքի նկատմամբ Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի իրավունքների պետական գրանցումն անվավեր կամ առոչինչ ճանաչելու վերաբերյալ վճիռ, այսինքն՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի ուժով առկա չէ գործող իրավունքի դադարման պետական գրանցում և գրանցված իրավունքի պետական գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար փաստական հիմք:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 19.01.2006 թվականի վճռով Գայանե և Արայիկ Երեմյանների հայցն ընդդեմ Վիոլետա Խառատյանի, ներգրավմամբ պատասխանող կողմում երրորդ անձինք՝ Մարինա Մարտիրոսյանի, Իրինա Օգանովայի, Էլվիրա Ֆրնչյանի՝ բաժնեմասն առանձնացնելու և ապօրինի զբաղեցված հողամասն ազատելը պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարվել է (քաղաքացիական գործ թիվ 2-327)՝ պատասխանող Վիոլետա Խառատյանը պարտավորեցվել է ազատել Երևանի ▪▪▪▪▪▪▪▪[6] հասեցեում գտնվող, համատեղ սեփականության իրավունքով հայցվորներ Գայանե և Արայիկ Երեմյաններին պատկանող հողամասից զավթած 145.2քմ մակերեսով հողամասի՝ Գայանե և Արայիկ Երեմյանների բաժնեմասին կից 11մ երկարություն և 6մ լայնություն ունեցող, 66քմ մակերեսով հողամասը: Երևանի ▪▪▪▪▪▪▪▪[7] հասցեում գտնվող, ընդհանուր սեփականություն հանդիսացող 924քմ մակերեսով հողամասից առանձնացվել է հայցվորներ Գայանե և Արայիկ Երեմյաններին պատկանող 462քմ մակերեսով հողամասը, որից 396քմ մակերեսով հողամասը՝ փաստացի առանձնացված է օրինական հողամասի սահմաններով, 66քմ մակերեսով հողամասը՝ պատասխանող Վիոլետա Խառատյանի կողմից ապօրինաբար զավթված, 11մ երկարությամբ և 6մ լայնություն ունեցող հողամասի սահմաններով (հատոր 1-ին, գ.թ.112-113).

2) վերը նշված վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով Գայանե և Արայիկ Երեմյանների հայցն ընդդեմ Վիոլետա Խառատյանի, ներգրավմամբ պատասխանող կողմում երրորդ անձինք Մարինա Մարտիրոսյանի, Իրինա Օգանովայի, Ալվինա Ֆրնչյանի՝ բաժնեմասն առանձնացնելու և ապօրինի զբաղեցված հողամասն ազատելը պարտավորեցնելու պահանջների մասին (քաղաքացիական գործ թիվ 06-1667)՝

[5] Հանդիսանում է անձնական տվյալ
[6] Հանդիսանում է անձնական տվյալ
[7] Հանդիսանում է անձնական տվյալ

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը 02.10.2006 թվականի վճռով հայցը մերժել է (հատոր 1-ին, գ.թ.114-115).

3) ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը 16.11.2006 թվականի «Վճիռը շրջադարձելու մասին» որոշմամբ որոշել է կատարել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 19.01.2006 թվականի վճռի շրջադարձ և վերականգնել մինչև վճիռը եղած վիճակը (հատոր 1-ին, գ.թ.116).

4) Կադաստրին ուղղված 28.12.2017 թվականի դիմումով Վիոլետա Խառատյանի ներկայացուցիչը խնդրել է չեղարկել 19.01.2006 թվականի վճռի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցում ստացած ▪▪▪▪▪▪▪▪[8] հասցեի իրավունքի պետական գրանցումը (հատոր 1-ին, գ.թ.149).

5) Կադաստրի 29.12.2017 թվականի «Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին» թիվ Կ-28-12-2017-1-0233 որոշման համաձայն՝ 28/12/2017-1-0233 դիմումի հիման վրա ▪▪▪▪▪▪▪▪[9] բնակելի տան նկատմամբ հարուցված իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցվել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված հիմքերով, քանի որ ներկայացված փաստաթղթերն օրենքով սահմանված կարգով հաստատված հիմք չեն հանդիսանում ▪▪▪▪▪▪▪▪[10] հասցեի պետական գրանցումը չեղարկելու համար (հատոր 1-ին, գ.թ.150).

6) Կենտրոն համայնք, ▪▪▪▪▪▪▪▪[11] հասցեի անշարժ գույքի՝ 0,0462հա հողամասի, 186,0քմ բնակելի տան և ավտոտնակի նկատմամբ 03.04.2006 թվականին Կադաստրի կողմից գրանցվել է Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի բաժնային սեփականության իրավունքը՝ յուրաքանչյուրը 1/2 բաժնով և տրվել է թիվ ▪▪▪▪▪▪▪▪[12] սեփականության վկայականը, որում, որպես գրանցման հիմք, նշվել են ըստ օրենքի ժառանգության իրավունքի 23.09.1999 թվականի թիվ ▪▪▪▪▪▪▪▪[13], 12.07.2005 թվականի թիվ ▪▪▪▪▪▪▪▪[14] վկայագրերը, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 19.01.2005 թվականի թիվ 2-327 վճիռը (կադաստրային գործի հատոր 2-րդ, գ.թ. 157, 158, 159, 150).

7) Թիվ ՎԴ/1756/05/14 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 03.04.2017 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով Վիոլետա Խառատյանի հայցն ընդդեմ Կադաստրի, երրորդ անձինք՝ Արայիկ Երեմյան, Գայանե Երեմյան, «Արարատբանկ» ԲԲԸ, Աշոտ Մարտիրոսյան՝ Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪[15] հասցեում գտնվող՝ Արայիկ և Գայանե Երեմյանների անվամբ՝ 03.04.2006 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը մասնակի՝ Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪[16] բնակելի տան՝ Վիոլետա Խառատյանին պատկանող հողամասի՝ Արայիկ և Գայանե Երեմյանների բաժնեմասին կից

[8] Հանդիսանում է անձնական տվյալ
[9] Հանդիսանում է անձնական տվյալ
[10] Հանդիսանում է անձնական տվյալ
[11] Հանդիսանում է անձնական տվյալ
[12] Հանդիսանում է անձնական տվյալ
[13] Հանդիսանում է անձնական տվյալ
[14] Հանդիսանում է անձնական տվյալ
[15] Հանդիսանում է անձնական տվյալ
[16] Հանդիսանում է անձնական տվյալ

11 մետր երկարություն և 6 մետր լայնություն ունեցող 66քմ մակերեսով հողամասի մասով՝ վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.11.2006 թվականի որոշմանը համապատասխան անվավեր ճանաչելու (չեղարկելու), ինչպես նաև՝ նույն դատական ակտին համապատասխան հողամասի նկատմամբ Վիոլետա Խառատյանի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելուն և նրան համապատասխան սեփականության իրավունքի գրանցման վկայական տալուն Կադաստրին պարտավորեցնելու պահանջների մասին, մերժվել է (հատոր 6-րդ, գ.թ. 109-122):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 13-րդ և նույն կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ, 163-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ, 26-րդ, 27-րդ, 124-րդ հոդվածների խախտման հետևանքով առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ ապացույցները գնահատելու և դրա արդյունքում հիմնավորված ու պատճառաբանված դատական ակտ կայացնելու օրենսդրական պահանջի պահպանման հարցին՝ վերահաստատելով նաև նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե ("ex officio"):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, (...) և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը (...) պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը դատական ակտի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատարանն իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված քաղաքացիական կամ վարչական գործով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտով հաստատված փաստերը միևնույն կողմերի մասնակցությամբ սույն օրենսգրքով նախատեսված որևէ գործ քննելիս վերստին ապացուցման կարիք չունեն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերին ներկայացվող պահանջների (...) վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կանոնները, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական ակտը պետք է լինի հիմնավորված և պատճառաբանված (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ակտը հիմնավորված է, եթե դրանում արտացոլված են այն կայացնելու համար անհրաժեշտ և բավարար փաստական և իրավական հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ակտը պատճառաբանված է, եթե դրանում արտացոլված են ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ վճռի պատճառաբանական մասը բովանդակում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, գործի լուծման համար նշանակություն չունեցող փաստերը՝ շարադրելով դատարանի եզրահանգումները յուրաքանչյուր փաստի ապացուցված լինելու վերաբերյալ և գնահատելով տվյալ փաստի հաստատման կամ մերժման համար պիտանի՝ դատավարության մասնակիցների ներկայացրած յուրաքանչյուր ապացույցը, եզրահանգում՝ որևէ ապացույց անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ ապացուցողական ուժ չունեցող համարելու մասին՝ հղում կատարելով այն իրավանորմերին, որոնց հիման վրա ապացույցը ճանաչվել է անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ ապացուցողական ուժ չունեցող, շարադրելով այն փաստերը, որոնց հիման վրա դատարանը եկել է նման եզրահանգման:

Այսպիսով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 27-րդ և 124-րդ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերոնշյալ իրավանորմերի համակցված վերլուծությանը, նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ապացույցների գնահատումը՝ որպես ապացուցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանի կողմից եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին:

Վարչադատավարական օրենսդրության համաձայն՝ դատարանը գործում եղած բոլոր ապացույցները գնահատում է ներքին համոզմամբ, որը պետք է հիմնված լինի գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա:

ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել նաև, որ թեև ներքին համոզմունքը սուբյեկտիվ կատեգորիա է, այդուհանդերձ, օրենսդիրն այն դիտարկում է որպես ապացույցների գնահատման միջոց, որը հանգեցնում է իրավական գնահատականների, հետևաբար և դատավարական օրենսդրությամբ նախատեսել է դրա օբյեկտիվության ապահովմանն ուղղված որոշակի երաշխիքներ, մասնավորապես՝

1) որպես դատարանի ներքին համոզմունքի օբյեկտիվ հիմք պետք է հանդիսանա գործում եղած ամեն մի ապացույցի և ապացույցների համակցության բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությունը,

2) դատարանն ազատ է ապացույցների գնահատման գործում:

Ներքին համոզմամբ ապացույցների ազատ գնահատումը ենթադրում է, որ դատարանը կաշկանդված չէ տվյալ ապացույցին գործին մասնակցող և այլ անձանց տված գնահատականներով և արտահայտած կարծիքներով:

Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը միայն այն դեպքում կարող է համարվել պատշաճորեն պատճառաբանված, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման օբյեկտիվ հիմքերը:

Այսպիսով, ապացույցների գնահատման արդյունքում ձևավորված ներքին համոզմունքն իրավական նշանակություն է ստանում և օբյեկտիվացվում դատական ակտերին ներկայացվող՝ հիմնավորվածության և պատճառաբանվածության օրենսդրական պահանջի միջոցով:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրված է գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (ex officio) սկզբունքը, որը դատական ապացուցման գործընթացում, մասնավորապես, դրսևորվում է կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու նպատակով անհրաժեշտ ապացույցներ պահանջելու վարչական դատարանին ընձեռված իրավական հնարավորությամբ (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդված) *(տե՛ս, Ջաջուռի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Շիրակի տարածքային սպորաբաժանման թիվ ՎԴ5/0029/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր մի շարք որոշումներում ներպետական դատարանների կողմից կայացված որոշումների չպատճառաբանվածությունը կամ ոչ բավարար պատճառաբանվածությունը դիտելով որպես անձի արդար դատական քննության իրավունքի խախտում, արտահայտել է այն իրավական

դիրքորոշումը, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանների կողմից կայացվող որոշումները պետք է ողջամտորեն պարունակեն այդ դատական ակտերի կայացման համար հիմք հանդիսացած պատճառաբանություններ՝ կողմերի լսված լինելու հանգամանքը ցույց տալու, ինչպես նաև արդարադատության իրականացման նկատմամբ հրապարակային հսկողություն ապահովելու նպատակով, սակայն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը չի կարող ընկալվել որպես պահանջ՝ մանրամասնորեն պատասխանելու կողմերի բարձրացրած բոլոր փաստարկներին: Ըստ այդմ, այն հարցը, թե դատարանը պատշաճորեն կատարել է արդյոք դատական ակտը պատճառաբանելու իր պարտականությունը, կարող է պարզվել միայն յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքների լույսի ներքո *(տե՛ս, Սալովն ընդդեմ Ուկրաինայի գործով Եվրոպական դատարանի 06.09.2005 թվականի վճիռը, 89-րդ կետ, Գարսիա Ռուիզն ընդդեմ Իսպանիայի գործով Եվրոպական դատարանի 21.01.1999 թվականի վճիռը, 26-րդ կետ)*:

Հարկ է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում ևս բազմիցս անդրադարձել է դատական ակտերի հիմնավորվածության հարցին՝ արձանագրելով, որ դատարանը ոչ միայն պետք է նշի այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում դատական ակտ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին *(տե՛ս, Ռազմիկ Մարությանն ընդդեմ Սրեփան և Անահիտ Մարությունների թիվ 3-54(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը)*:

Ողջ վերոգրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատական ակտերին ներկայացվող՝ հիմնավորվածության և պատճառաբանվածության օրենսդրական պահանջի պահպանումը պայմանավորում է դատարանի կողմից գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի պարզմանն ուղղված գործում առկա բոլոր ապացույցների՝ ներքին համոզմամբ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումը և գնահատումը: Միաժամանակ, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածով, որպես բացառություն, սահմանել է այնպիսի փաստեր, որոնք չունեն ապացուցման կարիք, ըստ այդմ՝ ներառված չեն տվյալ գործով ապացուցման առարկայի շրջանակում:

Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկով անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակության վերլուծությանը, արձանագրել է, որ դատավարության մասնակիցներն այլևս չեն կարող կասկածի տակ դնել, վիճարկել օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված փաստերը. նրանց կողմից այդ փաստերը չեն կարող վիճարկվել իրենց մասնակցությամբ այլ դատական գործերի շրջանակներում, և ունեն նախադատելի նշանակություն այլ դատական գործերի համար: Այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված փաստերն այլևս անվիճելի փաստեր են, և դատական ակտի պարտադիրությունը, ի թիվս այլնի, դատավարության կողմերից պահանջում է միմյանց հետ իրավահարաբերություններում այսուհետ անվերապահորեն հիմք ընդունել դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտով հաստատված փաստերը *(տե՛ս, Վայոց ձորի Գլաձոր համայնքի ղեկավար Արմեն Մովսիսյանն ընդդեմ ՀՀ հարկադիր*

կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ3/0037/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.11.2022 թվականի որոշումը):

Բացի այդ, ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորմանը, արձանագրել է. «(...) նախադատելիությունը ենթադրում է վարչական գործով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտով հաստատված փաստերը հետագայում քննվող վարչական գործով ապացուցելու պարտականությունից ազատում որոշակի սահմաններում, ինչպես նաև բացառում է այդ փաստերը հետագայում քննվող վարչական գործի շրջանակներում հերքելու հնարավորությունը: (...) վարչական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտով հաստատված փաստերը, անկախ դատարանի կողմից քննվող վեճին տրված լուծումից, կարող են կանխորոշիչ նշանակություն ունենալ նույն անձանց մասնակցությամբ հետագայում քննվող վարչական և քաղաքացիական գործերի լուծման համար *(տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 02.03.2021 թվականի թիվ ՍԴՈ-1579 որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ գործին մասնակցող անձանց համար նախադատելիությունը նշանակում է որոշակի սահմաններում ապացուցման պարտականությունից ազատում, ինչպես նաև կրկնակի ապացուցման կամ նման հանգամանքները հետագա դատավարություններում հերքելու արգելք: Նախադատելիությունը դատարանի համար ենթադրում է պարտականություն՝ ներմուծելու նման հանգամանքը նոր կայացվող դատական ակտում:

Որպես կանոն, դատական ակտերի պրեյուդիցիալ կապը ենթադրում է դատական ակտի նախադատելիության տարածում ամբողջ ծավալով թե՛ գործին մասնակցող անձանց, թե՛ դատարանի վրա (...): Հետևաբար, նախադատելիությունը օրենքի ուժով միանշանակ կանխորոշիչ դերակատարություն է ունենում նոր դատական ակտի համար, իսկ գործին մասնակցող անձանց կամքը և դատական հայեցողությունն այս հարցում ազդեցություն չունեն: Դատական ակտի պրեյուդիցիալ կապի կամ նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են հանգամանքների այն շրջանակով, որոնք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և ենթակա չեն կրկին ապացուցման կամ հերքման այլ գործ քննելիս *(տե՛ս, «Սաթնէ» ՍՊԸ-ն ընդդեմ Աշոտ և Հենրիկ Այվազյանների թիվ 3-93(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը):*

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում շեշտադրել, որ դատական ակտի նախադատելիությունը վերաբերում է բացառապես նախկինում քննված այլ գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով արդեն իսկ հաստատված փաստական հանգամանքներին, հետևաբար նշված դատական ակտով դատարանի կողմից տրված իրավական մեկնաբանությունը նախադատելիության հատկանիշով օժտված չէ:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Վիոլետա Խառատյանի իրավահաջորդ Սոնա Գևորգյանի կողմից ներկայացված հայցի

հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել 29.12.2017 թվականի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կասեցումը և պարտավորեցնել պատասխանողին ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪[17] տուն հասցեի վերաբերյալ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 19.01.2006 թվականի թիվ 2-327 վճռի հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումը:

Դատարանը 17.06.2024 թվականի վճռով հայցը մերժել է՝ այն պատճառաբանությամբ, որ *«(…) Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪[18] փուն հասցեի անշարժ գույքի նկատմամբ Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի սեփականության իրավունքի գրանցումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չի ճանաչվել ուժը կորցրած, անվավեր կամ առոչինչ, այսինքն՝ հանդիսանում է գործող սեփականության իրավունքի պետական գրանցում:*

(…) «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2.1.-րդ մասի ուժով Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի սեփականության իրավունքի գրանցման դադարեցումը, որպես գործող սեփականության իրավունքի պետական գրանցում, կարող է իրականացվել բացառապես գրանցված իրավունք ունեցող սուբյեկտի (տվյալ դեպքում՝ Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի) սեփականության իրավունքը դադարեցնող դատական ակտի հիման վրա՝ շահագրգիռ անձի (տվյալ դեպքում՝ Վիոլետա Խառատյանի) դիմումի հիման վրա:

Մինչդեռ տվյալ դեպքում առկա չէ Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪[19] հասցեի գույքի նկատմամբ Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը դադարեցնող դատական ակտ, այն է՝ Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪[20] հասցեի գույքի նկատմամբ Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի իրավունքների պետական գրանցումն անվավեր կամ առոչինչ ճանաչելու վերաբերյալ վճիռ, այսինքն՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի ուժով առկա չէ գործող իրավունքի դադարման պետական գրանցում և գրանցված իրավունքի պետական գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար փաստական հիմք:

(…) Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪[21] հասցեի գույքի նկատմամբ Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի իրավունքների պետական գրանցումը հանդիսանում է անբողոքարկելի վարչական ակտ:

(…) յուրաքանչյուր ոք պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪[22] հասցեի գույքի նկատմամբ Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի իրավունքների պետական գրանցումն ընդունվել է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված լիազորությունների շրջանակում, իրավաչափ է և որևէ անձ չի կարող կասկածի տակ դնել դրա իրավաչափությունը:

Ավելին՝ թիվ ՎԴ/1756/05/14 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 03.04.2017 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով Վիոլետա Խառատյանի հայցը՝ Կադաստրին

[17] Հանդիսանում է անձնական տվյալ
[18] Հանդիսանում է անձնական տվյալ
[19] Հանդիսանում է անձնական տվյալ
[20] Հանդիսանում է անձնական տվյալ
[21] Հանդիսանում է անձնական տվյալ
[22] Հանդիսանում է անձնական տվյալ

Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪[23] փող. հասցեում գտնվող՝ Արայիկ և Գայանե Երեմյանների անվամբ՝ 03.04.2006 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը մասնակի՝ Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪[24] բնակելի տան՝ Վիոլետա Խառատյանին պատկանող հողամասի՝ Արայիկ և Գայանե Երեմյանների բաժնեմասին կից 11 մետր երկարություն և 6 մետր լայնություն ունեցող 66 քմ մակերեսով հողամասի մասով՝ վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.11.2006 թվականի որոշմանը համապատասխան անվավեր ճանաչելու (չեղարկելու) պահանջի մասին մերժվել է:

(…)

Տվյալ դեպքում Դատարանը փաստում է, որ թիվ ՎԴ/1756/05/14 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 03.04.2017 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված է համարվել այն փաստը, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.11.2006 թվականի՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 19.01.2006 թվականի վճիռը շրջադարձելու և մինչև վճիռը եղած վիճակը վերականգնելու մասին որոշումը վերաբերում է մինչև դատական ակտերի կայացումը եղած դրության վերականգնմանը, իսկ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.11.2006 թվականի՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 19.01.2006 թվականի վճիռը շրջադարձելու և մինչև վճիռը եղած վիճակը վերականգնելու մասին որոշումը դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով փաստացի կատարվել է և հողամասերը միմյանցից առանձնացվել են՝ վիճելի հողամասը փաստացի հանձնելով հայցվորին:

(…) թիվ ՎԴ/1756/05/14 վարչական գործը և սույն վարչական գործը քննվում են միևնույն կողմերի՝ Վիոլետա Խառատյանի, Կադաստրի, Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի մասնակցությամբ:

(…) թիվ ՎԴ/1756/05/14 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 03.04.2017 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված փաստը՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.11.2006 թվականի՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 19.01.2006 թվականի վճիռը շրջադարձելու և մինչև վճիռը եղած վիճակը վերականգնելու մասին որոշումը դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով փաստացի կատարված լինելու և հողամասերը միմյանցից առանձնացված լինելու, վիճելի հողամասը փաստացի հայցվորին հանձվելու վերաբերյալ, ձեռք է բերել նախադատելիության հատկանիշ, նշված փաստը սույն գործը քննելիս ունի պարտադիր նշանակություն դատավարության մասնակիցների և Դատարանի համար և վերստին ապացուցման կարիք չունի:

(…) ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.11.2006 թվականի՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 19.01.2006 թվականի վճիռը շրջադարձելու և մինչև վճիռը

[23] Հանդիսանում է անձնական տվյալ
[24] Հանդիսանում է անձնական տվյալ

եղած վիճակը վերականգնելու մասին որոշումը դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով փաստացի կատարված լինելու և հողամասերը միմյանցից առանձնացված լինելու, վիճելի հողամասը փաստացի հայցվորին հանձվելու վերաբերյալ փաստերը թիվ ՎԴ/1756/05/14 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 03.04.2017 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված լինելու պայմաններում սույն գործով ներկայացված հայցն անհիմն է և ենթակա է մերժման (…)»:

Վերաքննիչ դատարանը 06.06.2025 թվականի որոշմամբ Վիոլետա Խառատյանի իրավահաջորդ Սոնա Գևորգյանի վերաքննիչ բողոքը մերժել է, և Դատարանի 17.06.2024 թվականի վճիռը թողել է անփոփոխ՝ այն պատճառաբանությամբ, որ *«(…) սույն դեպքում Կենտրոն համայնք, ▪▪▪▪▪▪▪▪[25] փուն հասցեի անշարժ գույքի նկատմամբ առկա է գործող սեփականության իրավունքի պետական գրանցում, որը դատական ակտի հիման վրա՝ շահագրգիռ անձի կամ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմնի ներկայացմամբ, չի դադարել, ուստի այն հանդիսանում է անբողոքարկելի դատական ակտ:*

(…) սույն վարչական գործում առկա ապացույցներով, մասնավորապես՝ թիվ ՎԴ/1756/05/14 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 03.04.2017 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվում է, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.11.2006 թվականի՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 19.01.2006թ. վճիռը շրջադարձելու և մինչև վճիռը եղած վիճակը վերականգնելու մասին որոշումը վերաբերում է մինչև դատական ակտերի կայացումը եղած դրության վերականգնմանը: Իսկ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.11.2006 թվականի՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 19.01.2006թ. վճիռը շրջադարձելու և մինչև վճիռը եղած վիճակը վերականգնելու մասին որոշումը դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով փաստացի կատարվել է և հողամասերը միմյանցից առանձնացվել են՝ վիճելի հողամասը փաստացի հանձնելով Հայցվորին, ուստի սույն դեպքում առկա չեն հիմքեր ՀՀ կադաստրի կոմիտեին Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪[26] փուն հասցեի վերաբերյալ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 19.01.2006 թվականի թիվ 2-327 վճռի հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումն ուժը կորցրած ճանաչելուն պարտավորեցնելու և հետևաբար նաև 29.12.2017 թվականի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կասեցումն անվավեր ճանաչելու համար: (…) ՀՀ վարչական դատարանի կողմից նշանակված չորս նիստերից երկուսը հետաձգվել են հայցվորի կողմից ներկայացված միջնորդության հիման վրա, միևնույն ժամանակ հայցվորը դատական պաշտպանության իր իրավունքը պարտավոր է իրացնել այնպես, որպեսզի չխախտվի մյուս կողմի (մասնակցի) ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունքը: (…)»:

[25] Հանդիսանում է անձնական տվյալ
[26] Հանդիսանում է անձնական տվյալ

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի վերլուծությունները և դրանք համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 19.01.2006 թվականի վճռով (քաղաքացիական գործ թիվ 2-327) Գայանե և Արայիկ Երեմյանների հայցն ընդդեմ Վիոլետա Խառատյանի, ներգրավմամբ պատասխանող կողմում երրորդ անձինք՝ Մարինա Մարտիրոսյանի, Իրինա Օգանովայի, Էլվիրա Ֆրնչյանի՝ բաժնեմասն առանձնացնելու և ապօրինի զբաղեցված հողամասն ազատելը պարտավորեցնելու պահանջների մասին բավարարվել է՝ պատասխանող Վիոլետա Խառատյանը պարտավորեցվել է ազատել Երևանի ▪▪▪▪▪▪▪▪[27] հասեցեում գտնվող, համատեղ սեփականության իրավունքով հայցվորներ Գայանե և Արայիկ Երեմյաններին պատկանող հողամասից զավթած 145.2քմ մակերեսով հողամասի՝ Գայանե և Արայիկ Երեմյանների բաժնեմասին կից 11մ երկարություն և 6մ լայնություն ունեցող, 66քմ մակերեսով հողամասը: Երևանի ▪▪▪▪▪▪▪▪[28] հասցեում գտնվող, ընդհանուր սեփականություն հանդիսացող 924քմ մակերեսով հողամասից առանձնացվել է հայցվորներ Գայանե և Արայիկ Երեմյաններին պատկանող 462քմ մակերեսով հողամասը, որից 396քմ մակերեսով հողամասը՝ փաստացի առանձնացված է օրինական հողամասի սահմաններով, 66քմ մակերեսով հողամասը՝ պատասխանող Վիոլետա Խառատյանի կողմից ապօրինաբար զավթված, 11մ երկարությամբ և 6մ լայնություն ունեցող հողամասի սահմաններով:

Վերը նշված վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով Գայանե և Արայիկ Երեմյանների հայցն ընդդեմ Վիոլետա Խառատյանի, ներգրավմամբ պատասխանող կողմում երրորդ անձինք Մարինա Մարտիրոսյանի, Իրինա Օգանովայի, Ալվինա Ֆրնչյանի՝ բաժնեմասն առանձնացնելու և ապօրինի զբաղեցված հողամասն ազատելը պարտավորեցնելու պահանջների մասին (քաղաքացիական գործ թիվ 06-1667)՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը 02.10.2006 թվականի վճռով հայցը մերժել է:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը 16.11.2006 թվականի «Վճիռը շրջադարձելու մասին» որոշմամբ որոշել է կատարել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 19.01.2006 թվականի վճռի շրջադարձ և վերականգնել մինչև վճիռը եղած վիճակը:

Կադաստրին ուղղված 28.12.2017 թվականի դիմումով Վիոլետա Խառատյանի ներկայացուցիչը խնդրել է չեղարկել 19.01.2006 թվականի վճռի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցում ստացած ▪▪▪▪▪▪▪▪[29] հասցեի իրավունքի պետական գրանցումը:

Կադաստրի 29.12.2017 թվականի «Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին» թիվ Կ-28-12-2017-1-0233 որոշման համաձայն՝ 28/12/2017-1-0233 դիմումի հիման վրա ▪▪▪▪▪▪▪▪[30] բնակելի

[27] Հանդիսանում է անձնական տվյալ
[28] Հանդիսանում է անձնական տվյալ
[29] Հանդիսանում է անձնական տվյալ
[30] Հանդիսանում է անձնական տվյալ

տան նկատմամբ հարուցված իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցվել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված հիմքերով, քանի որ ներկայացված փաստաթղթերն օրենքով սահմանված կարգով հաստատված հիմք չեն հանդիսանում ▪▪▪▪▪▪▪▪[31] հասցեի պետական գրանցումը չեղարկելու համար:

Կենտրոն համայնք, ▪▪▪▪▪▪▪▪[32] տուն հասցեի անշարժ գույքի՝ 0,0462հա հողամասի, 186,0քմ բնակելի տան և ավտոտնակի նկատմամբ 03.04.2006 թվականին Կադաստրի կողմից գրանցվել է Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի բաժնային սեփականության իրավունքը՝ յուրաքանչյուրը 1/2 բաժնով և տրվել է թիվ ▪▪▪▪▪▪▪▪[33] սեփականության վկայականը, որում, որպես գրանցման հիմք, նշվել են ըստ օրենքի ժառանգության իրավունքի 23.09.1999 թվականի թիվ ▪▪▪▪▪▪▪▪[34], 12.07.2005 թվականի թիվ ▪▪▪▪▪▪▪▪[35] վկայագրերը, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 19.01.2005 թվականի թիվ 2-327 վճիռը:

Թիվ ՎԴ/1756/05/14 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 03.04.2017 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով Վիոլետա Խառատյանի հայցն ընդդեմ Կադաստրի, երրորդ անձինք՝ Արայիկ Երեմյան, Գայանե Երեմյան, «Արարատբանկ» ԲԲԸ, Աշոտ Մարտիրոսյան՝ Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪[36] տան հասցեում գտնվող՝ Արայիկ և Գայանե Երեմյանների անվամբ՝ 03.04.2006 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը մասնակի՝ Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪[37] բնակելի տան՝ Վիոլետա Խառատյանին պատկանող հողամասի՝ Արայիկ և Գայանե Երեմյանների բաժնեմասին կից 11 մետր երկարություն և 6 մետր լայնություն ունեցող 66քմ մակերեսով հողամասի մասով՝ վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.11.2006 թվականի որոշմանը համապատասխան անվավեր ճանաչելու (չեղարկելու), ինչպես նաև՝ նույն դատական ակտին համապատասխան հողամասի նկատմամբ Վիոլետա Խառատյանի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելուն և նրան համապատասխան սեփականության իրավունքի գրանցման վկայական տալուն Կադաստրին պարտավորեցնելու պահանջների մասին, մերժվել է:

Վճռաբեկ դատարանը նախ հարկ է համարում ընդգծել, որ սույն վարչական գործով դատարան ներկայացված ապացույցներով հաստատվում են վիճելի հողամասի նկատմամբ հայցվորի սեփականության իրավունքը ծագած լինելու, ըստ այդմ՝ հայցվորին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ 03.04.2006 թվականին երրորդ անձանց անվամբ իրավունքի պետական գրանցում կատարված լինելու հանգամանքները:

Մասնավորապես՝ վիճելի հողամասը հայցվորին սեփականության իրավունքով պատկանելու հանգամանքը հաստատվում է թիվ 06-1667 քաղաքացիական գործով ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 02.10.2006 թվականի վճռով, ավելին՝

---

[31] Հանդիսանում է անձնական տվյալ
[32] Հանդիսանում է անձնական տվյալ
[33] Հանդիսանում է անձնական տվյալ
[34] Հանդիսանում է անձնական տվյալ
[35] Հանդիսանում է անձնական տվյալ
[36] Հանդիսանում է անձնական տվյալ
[37] Հանդիսանում է անձնական տվյալ

նույն քաղաքացիական գործով ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.11.2006 թվականի «Վճիռը շրջադարձելու մասին» որոշման հիման վրա վիճելի հողամասը փաստացի վերադարձվել է հայցվորին, սակայն դրա նկատմամբ իրավունքների պետական գրանցումը շարունակել է մնալ Արայիկ և Գայանե Երեմյանների անվամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները սույն գործով հայցվորի պահանջի մերժման ենթակա լինելը, ըստ էության, հիմնավորել են, որ՝ *Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪*[38] *փուն հասցեի անշարժ գույքի նկատմամբ Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի սեփականության իրավունքի գրանցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չի ճանաչվել ուժը կորցրած, անվավեր կամ առոչինչ, այսինքն՝ հանդիսանում է գործող սեփականության իրավունքի պետական գրանցում, որը կարող է դադարեցվել բացառապես գրանցված իրավունք ունեցող սուբյեկտի (տվյալ դեպքում՝ Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի) սեփականության իրավունքը դադարեցնող դատական ակտի հիման վրա, մինչդեռ տվյալ դեպքում առկա չէ նշված հասցեի գույքի նկատմամբ Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը դադարեցնող դատական ակտ, այսինքն՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի ուժով առկա չէ գործող իրավունքի դադարման պետական գրանցում և գրանցված իրավունքի պետական գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար փաստական հիմք, Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի իրավունքների պետական գրանցումը հանդիսանում է անբողոքարկելի վարչական ակտ, ուստի յուրաքանչյուր ոք պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪*[39] *հասցեի գույքի նկատմամբ Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի իրավունքների պետական գրանցումն ընդունվել է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված լիազորությունների շրջանակում, իրավաչափ է և որևէ անձ չի կարող կասկածի տակ դնել դրա իրավաչափությունը:*

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ստորադաս դատարանները սույն վարչական գործով դատարան ներկայացված՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի թիվ 06-1667 քաղաքացիական գործով 02.10.2006 թվականի վճռի բնույթի վերաբերյալ գալով սխալ եզրահանգման, առաջնային են համարել Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի իրավունքների պետական գրանցման՝ որպես անբողոքարկելի վարչական ակտ հանդիսանալու հանգամանքը, ավելին՝ անտեսել են, որ նշված վարչական ակտը՝ Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի իրավունքների պետական գրանցումը կատարվել է 19.01.2006 թվականի վճռի հիման վրա, որը, սակայն հետագայում ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի վերոնշյալ վճռով բեկանվել է:

Վերը նշված փաստակազմի առկայության պայմաններում՝ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ստորադաս դատարանների կողմից «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2.1 մասի 1-ին կետի իրավակարգավորմանը, ըստ որի՝ «*գործող սեփականության իրավունքի պետական գրանցման դադարեցումն առանց սեփականության իրավունքի նոր պետական գրանցման իրականացվում է՝ գրանցված իրավունք ունեցող սուբյեկտի սեփականության իրավունքը*

[38] Հանդիսանում է անձնական տվյալ
[39] Հանդիսանում է անձնական տվյալ

դադարեցնող դատական ակտի հիման վրա՝ շահագրգիռ անձի կամ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմնի ներկայացմամբ», տրված մեկնաբանության և դրա կիրառելիության իրավաչափությանը, արձանագրում է հետևյալը.

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. (...)

- **իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր**՝ օրենքով սահմանված հիմքերով պետական գրանցման ենթակա իրավունքների ձեռքբերման համար օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի ավարտի իրավական ձևակերպման համար անհրաժեշտ և բավարար գրավոր փաստաթուղթ, այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրեր, պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների անհատական ակտեր, **դատական ակտեր,** իսկ օրենքի ուժով ճանաչված իրավունքի համար՝ այդ օրենքով նման իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ և բավարար նախապայման հանդիսացող իրավաբանական փաստերը հաստատող գրավոր փաստաթղթեր.

- իրավահաստատող փաստաթղթեր՝ **իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր** և գույքագրման փաստաթղթեր. (...):

Նույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ իրավունքի պետական գրանցում իրականացնող մարմինը դադարեցնում է պետական գրանցման վարույթը, եթե՝ գրանցման ընթացքում պաշտոնապես հայտնի է դարձել, որ պետական գրանցման ներկայացված իրավունքը կամ սահմանափակումը, իրավատերը կամ գույքը գոյություն չունի, կամ **իրավահաստատող փաստաթղթերը ճանաչվել են ուժը կորցրած, անվավեր կամ առոչինչ**:

Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի իմաստով, ի թիվս այլնի, իրավահաստատող փաստաթղթեր են հանդիսանում նաև դատական ակտերը, իսկ իրավահաստատող փաստաթղթերի ուժը կորցրած ճանաչված լինելը հիմք է իրավունքի պետական գրանցման վարույթը դադարեցնելու համար: Նշված իրավակարգավորումը ևս հիմք է եզրակացնելու, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2.1 մասի 1-ին կետով նախատեսված՝ «գրանցված իրավունք ունեցող սուբյեկտի **սեփականության իրավունքը դադարեցնող դատական ակտի** հիման վրա» ձևակերպումը ներառում է նաև այն դատական ակտերը, որոնցով բեկանվել է իրավունքի պետական գրանցման համար իրավահաստատող փաստաթուղթ հանդիսացող դատական ակտը:

Այսպես, ինչպես պարզ դարձավ վերոգրյալից, թիվ 06-1667 քաղաքացիական գործով ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 02.10.2006 թվականի վճռով բեկանվել է այն դատական ակտը, որը հիմք է հանդիսացել երրորդ անձանց՝ Արայիկ և Գայանե Երեմյանների անվամբ վիճելի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար, այսինքն՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի վերոնշյալ դատական ակտը բովանդակային առումով դադարեցրել է երրորդ անձանց վիճելի գույքի նկատմամբ բեկանված դատական ակտով ձեռք բերված սեփականության իրավունքը: Ուստիև Վճռաբեկ դատարանը վերստին ընդգծում է, որ ստորադաս

դատարանները ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի դատական ակտի բնույթի վերաբերյալ եկել են ոչ իրավաչափ եզրահանգման:

Հետևաբար, երրորդ անձանց սեփականության իրավունքի գրանցման համար հիմք հանդիսացած վճռի բեկանված, այլ խոսքով՝ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման համար հիմքի վերացված լինելու պայմաններում սույն գործով ներկայացված հայցով պահանջն իրավաչափորեն ուղղվել է իրավունքների պետական գրանցումը ամբողջությամբ չեղարկելուն և/կամ ուժը կորցրած ճանաչելուն:

Ամփոփելով ողջ վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարաններն անտեսել են, որ տվյալ դեպքում առկա է Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪[40] հասցեի գույքի նկատմամբ Արայիկ Երեմյանի և Գայանե Երեմյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը դադարեցնող դատական ակտ՝ նկատի ունենալով, որ վերջիններիս անվամբ վիճելի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն առաջին անգամ կատարվել է հենց բեկանված վճռի (դատական ակտի) հիման վրա:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը շեշտադրում է, որ Վերաքննիչ դատարանը ոչ միայն հաշվի չի առել վերը նշվածը, այլև անտեսել է, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի թիվ 06-1667 քաղաքացիական գործով 02.10.2006 թվականին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է վիճելի գույքի նկատմամբ հայցվորի սեփականության իրավունքը ծագած լինելու հանգամանքը, իսկ սույն վարչական գործում առկա չէ որևէ փաստական տվյալ հայցվորի՝ վիճելի գույքի նկատմամբ սեփականության իրավունքից որևէ օրինական հիմքով զրկված լինելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ երրորդ անձանց սեփականության իրավունքի պետական գրանցումը, ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դատական վարույթի շրջանակում՝ իրավունքի պետական գրացման համար հիմք հանդիսացող իրավահաստատող փաստաթղթի գոյություն չունենալու պայմաններում, չի կարող որպես վարչական ակտ պաշտպանվել իրավաչափության կանխավարկածով, ըստ այդմ՝ սահմանափակել հայցվորի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված սեփականության իրավունքի պատշաճ իրացումը՝ ներքոշարադրյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Տվյալ դեպքում երրորդ անձանց՝ վիճելի հողամասի նկատմամբ սեփականության իրավունք ձեռքբերելու իրավահաստատող փաստաթուղթը՝ դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկման արդյունքում բեկանվել է, այսինքն՝ վերացել է սեփականության իրավունքի ձեռքբերման օրինական հիմքը, որպիսի պայմաններում, վերջիններս չեն կարող ակնկալել իրենց նկատմամբ սահմանադրական վերոգրյալ նորմի կիրառելիություն: Հակառակ նշվածի՝ վիճելի հողամասի նկատմամբ հայցվորի սեփականության իրավունքի ծագման փաստը հաստատվում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, ավելին, ինչպես արդեն իսկ արձանագրվել է վերը, ըստ սույն

[40] Հանդիսանում է անձնական տվյալ

վարչական գործում առկա ապացույցների, այն օրենքով նախատեսված որևէ հիմքով վերացված չէ:

Հաջորդիվ, անդրադառնալով երրորդ անձանց փաստարկին թիվ ՎԴ/1756/05/14 վարչական գործով և սույն վարչական գործով նույնական պահանջներ ներկայացված լինելու վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել հետևյալը.

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6.1-ին մասի համաձայն՝ պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը պետական գրանցման և գրանցման համար դիմելու ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու դիմումը քննարկում և լուծում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 50-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե՝ գոյություն ունի միևնույն անձի, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով ուժի մեջ մտած վարչական կամ դատական ակտ:

Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը բացառում է նույն անձի, միևնույն առարկայի և միևնույն հիմքով վարչական կամ դատական ակտի առկայության պայմաններում կրկին վարչական վարույթ իրականացնելու հնարավորությունը: Նկատի ունենալով, որ պատասխանողը հայցվորի 28.12.2017 թվականի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի նկատմամբ չի կիրառել վերոգրյալ նորմը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշվածով հերքվում է երրորդ անձանց՝ վճռաբեկ բողոքի պատասխանով ներկայացված վերոգրյալ փաստարկը:

Ինչ վերաբերում է վերը նշված վարչական գործով կայացված դատական ակտով հաստատված փաստերը սույն վարչական գործի քննության ընթացքում նախադատելի լինելու և դրա հիման վրա հայցվորի պահանջը մերժման ենթակա լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի պատճառաբանության իրավաչափությանը, ապա Վճռաբեկ դատարանը նախ հարկ է համարում արձանագրել, որ, Վերաքննիչ դատարանը նշվածը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) *թիվ ՎԴ/1756/05/14 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 03.04.2017 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվում է, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.11.2006 թվականի՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 19.01.2006թ. վճիռը շրջադարձելու և մինչև վճիռը եղած վիճակը վերականգնելու մասին որոշումը վերաբերում է մինչև դատական ակտերի կայացումը եղած դրության վերականգնմանը: Իսկ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.11.2006 թվականի՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 19.01.2006թ. վճիռը շրջադարձելու և մինչև վճիռը եղած վիճակը վերականգնելու մասին որոշումը դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով փաստացի կատարվել է և հողամասերը միմյանցից առանձնացվել են՝ վիճելի հողամասը փաստացի հանձնելով Հայցվորին, ուստի սույն դեպքում առկա չեն հիմքեր ՀՀ կադաստրի կոմիտեին*

Երևան քաղաքի ▪▪▪▪▪▪▪▪[41] փուն հասցեի վերաբերյալ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 19.01.2006 թվականի թիվ 2-327 վճռի հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումն ուժը կորցրած ճանաչելուն պարտավորեցնելու և հետևաբար նաև 29.12.2017 թվականի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կասեցումն անվավեր ճանաչելու համար»:

Այսպես, նախկինում կայացված որոշումներից մեկով ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավարական իմաստով դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի հարց կարող է լուծել, եթե՝

1. առկա է դատարանի ի կատար ածված վճիռ, և

2. դատարանի ի կատար ածված վճիռն իրավասու դատական ատյանի կողմից բեկանվել է, և կայացվել է հայցը լրիվ կամ մասնակի մերժելու մասին նոր դատական ակտ, կամ գործի վարույթը կարճվել է, կամ հայցը թողնվել է առանց քննության:

Վճռի կատարման շրջադարձի նպատակն է դատական կարգով վերականգնել պատասխանողի իրավունքներն ու օրինական շահերը, որոնք խախտվել են բեկանված դատական ակտով: Բեկանված դատական ակտի փոխարեն համապատասխան դատարանի կողմից կայացվում է գործն ըստ էության լուծող այլ դատական ակտ՝ հայցը լրիվ կամ մասնակի մերժելու կամ գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին, որից հետո պարտապանը (գույքի նախկին սեփականատերը) իրավունք է ձեռք բերում վերականգնել նախկին դրությունը (*տե՛ս, ըստ Նինա Չալտիկյանի դիմումի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի թիվ 2-4247/2004թ. որոշումը*):

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ վճռի կատարման շրջադարձի նպատակն է՝ վերացնել ի կատար ածված դատական ակտի իրավական հետևանքները՝ վերականգնել այդ ակտի կայացմանը նախորդող իրավական դրությունը և գործի հանգամանքներով պայմանավորված՝ վերականգնել շահագրգիռ կողմի խախտված նախկին իրավունքներն ու պարտականությունները:

ՀՀ սահմանադրական դատարանի 28.06.2013 թվականի թիվ ՍԴՈ-1102 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ նյութական-իրավական իմաստով դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի հարց կարող է լուծվել մասնավոր այնպիսի դեպքերում, երբ առկա են դատարանի կայացրած ակտի բեկանման (լրիվ կամ մասնակի), գործի վարույթը կարճելու, հայցն առանց քննության թողնելու՝ օրենքով նախատեսված հիմքեր, հետևաբար՝ նաև այդ ակտն ի կատար ածելու արդյունքում առաջացած իրավական հետևանքները վերացնելու (այդ ակտի կայացմանը նախորդող իրավական դրությունը, գործի հանգամանքներով պայմանավորված շահագրգիռ կողմի (տուժողի) նախկին իրավունքներն ու պարտականությունները վերականգնելու) իրավական անհրաժեշտություն: Այսինքն՝ դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի նպատակն արդար և արդյունավետ արդարադատության իրականացման (արդարադատության նպատակների իրականացման) ապահովումն է, իսկ օբյեկտը՝ գույքային իրավունքն է և դրանով պայմանավորված կողմերի՝ միմյանց հանդեպ ունեցած իրավունքներն ու պարտականությունները, դրանց իրացման իրավաչափությունը՝ քաղաքացիաիրավական տվյալ վեճի շրջանակներում:

---

[41] Հանդիսանում է անձնական տվյալ

Ավելին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է այն դիրքորոշումը, որ խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում (*տե՛ս, Պապամիկալոպոպուլոսն ընդդեմ Հունաստանի (Papamichalopopuulos v. Greece) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 31.10.1995 թվականի վճիռը, կետ 34*):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը շեշտադրում է, որ վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ դիմումի քննության վարույթի նպատակը մինչև բեկանված դատական ակտի կատարումը եղած դրությունը վերականգնելն է, որը պահանջում է վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.11.2006 թվականի՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 19.01.2006 թվականի վճիռը շրջադարձելու և մինչև վճիռը եղած վիճակը վերականգնելու մասին որոշումը դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով փաստացի կատարված և հողամասերը միմյանցից առանձնացված լինելու, վիճելի հողամասը փաստացի Հայցվորին հանձնված լինելու փաստերը իրավաչափորեն, որպես նախադատելի փաստեր, գնահատելու պայմաններում, անտեսել է, որ նշվածը որևէ կերպ չի չեզոքացնում, սույն վարչական գործով կիրառելի իրավական նորմերի մեկնաբանության համատեքստում վճռի շրջադարձի վերաբերյալ որոշումը փաստացի կատարված լինելու պայմաններում բեկանված վճռով հայցվորի խախտված իրավունքներն ամբողջ ծավալով վերականգնված լինելու հանգամանքը սույն վարչական գործի շրջանակում գնահատելու հնարավորությունը:

Ողջ վերոգրյալ հիմնավորմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, սույն վարչական գործում առկա ապացույցների հետազոտման արդյունքում, սխալ եզրահանգման են եկել հայցվորի պահանջը մերժման ենթակա լինելու վերաբերյալ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի

գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվորի կողմից հայցադիմում ներկայացնելու համար վճարվել է 8.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար, վերաքննիչ բողոքի համար՝ 20.000 ՀՀ դրամ, իսկ վճռաբեկ բողոքի համար՝ 40.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար: Հաշվի ատնելով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որի արդյունքում Վիոլետա Խառատյանի իրավահաջորդ Սոնա Գևորգյանի հայցը բավարարվում է, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցվորի կողմից հայցադիմումի, վերաքննիչ բողոքի և վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման պատասխանողի կողմից:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 06.06.2025 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Վիոլետա Խառատյանի իրավահաջորդ Սոնա Գևորգյանի հայցը բավարարել. անվավեր ճանաչել ՀՀ կադաստրի կոմիտեի 29.12.2017 թվականի «Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին» թիվ Կ-28-12-2017-1-0233 որոշումը: Պարտավորեցնել ՀՀ կադաստրի կոմիտեին ուժը կորցրած ճանաչել քաղաք Երևան, ▪▪▪▪▪▪▪▪[42] տուն հասցեի վերաբերյալ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 19.01.2006 թվականի թիվ 2-327 վճռի հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումը:

2. ՀՀ կադաստրի կոմիտեից հօգուտ Վիոլետա Խառատյանի իրավահաջորդ Սոնա Գևորգյանի բռնագանձել 8.000 ՀՀ դրամ, որպես հայցադիմում ներկայացնելու համար, 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի և 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի փոխհատուցման գումարներ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող **Հ. ԲԵԴԵՎՅԱՆ**

Զեկուցող **Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ**

Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ք. ՄԿՈՅԱՆ

[42] Հանդիսանում է անձնական տվյալ